498

Շ.Ս.Խ.Շ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

91.99-8
Գ-87

25

04 MAY 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

428
ԵՄ-ԳՐ

ԳՐԱԳԵՏ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քանի գեռ մեզ մոտ կա անգրագիտություն, բաղաքական լուսավորության մասին խոսք չի կարող լինել: Անգրագեթ բաղաքականությունից զուրս է:

ԼԵՆԻՆ

ԿԱԶՄԵՑԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
Հինգերորդ տիպ.

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

458

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1925.

21.03.2013

221
ԴԲ-76

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.С.Р.
Գ. Մ. Ա. Մարտիրոսյան
Գ. Սեբաստ. Ուսուցիչ. Ինստիտուտ

378-91

№ 248. Տիրաժ 50,000 Գրառեպավար № 10 բ.

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ

Ներկա հրատարակության մեջ, նախկին փորձերի հիման վրա, արված են միքանի փոփոխություններ և ուղղումներ։

1. Հնչյուններն անմիջապես առաջին դասից չեն զատվում, այլ 6-7 դասից հետո, յերբ բառերի և վանկերի գծագրական պատկերը յուրացնելու մեջ բավականաչափ վարժվել են։

2. Անկապ, միտք չարտահայտող վանկերը վերացված են։

3. Առաջին դասն սկսվում է բանավոր զրույցով, վորի նյութն է առաջին պատկերը, իսկ նպատակը պիտի լինի պարզաբանել I լոզունգի «ուսումը ուժ է» իմաստը։

Մեր ցանկության հակառակ հնարավոր չեղավ յուրաքանչյուր լոզունգի իմաստը նկարով արտահայտել. աշխատել ենք մեջ ընդ մեջ այդ բացը լրացնել։

4. Մաթեմատիկական բաժինը կոմպլեքսային սիստեմի հիմունքներով զուգընթաց տարվում է նյութի համապատասխան տեղում (տեսական ցուցմունքներ տես «Մեթոդական ժողովածու» (ձեռնարկ լիկ-կայան. ուսուցիչն. համար)։

5. Վորոշ դեպքերում դասատուներին ոգնելու նպատակով հարցեր ու ցուցմունքներ են զետեղված եջերի ստորև։

6. Միքանի վարժության նոր նյութ է ավելացրած և տեղ-տեղ մրտքերն ավելի կապակցված, փոփոխության են յենթարկած։

7. «Ընթերցարան» բաժինը հարստացրած է նոր հոդվածներով, վոտանավորներով և նկարներով։

Դասագիրքը կազմված է Մոսկվայի համառուսական մեթոդիստների կոնֆերենցիայի կողմից (1922 թ. 7—12 սեպտ.) ընդունված ամբողջական բառերի վերլուծական-համադրական (անալիզ-սինտեզ) մեթոդով (տես «Մեթոդ. ժող.») Այս մեթոդով առաջին քայլից վարժեցնում են սովորողներին կարդալ ու ըմբռնել միանգամից ամբողջ բառերի բառապատկերները։

Նախադասությունը—լոզունգը—ամբողջական բառերով կարդալ սովորելուց հետո բաժանում են հատ-հատ բառերի (վերլուծում). այդ բառերը տեղափոխելով, յետ ու առաջ տանելով ստանում են նոր նախադասություն (համադրում)։ Այս վարժություններից հետո բառերը բաժանում են վանկերի (վերլուծում կամ անալիզ) և այդ վանկերից կազմում են նոր բառեր, նոր մտքեր (համադրում կամ սինտեզ)։

VII-դ դասից սկսում են բառերից հնչյուններ դուրս բերել,—վերլուծել, ստացած հնչյուններից—նոր վանկեր, բառեր ու մտքեր կազմել-համադրել։

Սկզբում պարապմունքների գլխավոր նպատակը լինելու յե «կարդալու գաղտնիքը» յուրացնելը, իսկ գիրը կամ արտանկարումը միայն մի ուժանգակ միջոց է հանդիսանալու մոտոր (շարժողական) հիշողության շնորհիվ ամրապնդելու բառերի ու վանկերի մտապատկերները։

ՄԻԲԱՆԻ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Առաջին դասն սկսվում է բանավոր զրույցով։ Պարզ ու հասկանալի բառերով, սովորողների մասնակցությամբ պետք է նկարագրել I պատկերը և աշխատել այդ զրույցի միջոցով պարզաբանել I լոզունգի իմաստը (հարցերը տես եջ I-ին)։ Հետո ուսուցիչը գրատախտակի վրա պարզ ու խոշոր տպագիր տառերով գրում է ամբողջ լոզունգը, ապա վորոշ ու հատու առոգանությամբ կարդում է գրածը, վորպեսզի սովորողները բառի հնչյունական կողմը զուգորդեն նրա գծագրական պատկերի հետ։ Նույնը կրկնում են սովորողները։ Նրանք արտանկարում են բառերը և կարդում իրենց գրածը։ Արտանկարելու միջոցին պետք է խիստ հետևել, վոր գրիչն այնպես շարժեն, ինչպես պահանջվում է տառերը գրելու համար, ապա թե վոչ, նրանք կարող են ներքևից սկսել տառի նկարելը, և այսպիսով ձեռագրի անցնելիս նոր դժվարություններ առաջ կգան։ Առաջարկում ենք լոզունգը խոշոր տառերով գրել լայն շերտ թղթի վրա այնպես, վոր կարելի լինի բառ առ բառ ծալել՝ վորպեսզի նախադասության վերլուծում-համադրումը պարզ ու վորոշ լինի. նույնը և տառերի ու վանկերի վերլուծական համադրության դեպքում։ Հնչյունները զատելու միջոցին կարելի չէ ոգտվել հատ-հատ շարժական տառերից։ Նույն վարժություններն անձամբ կատարում են սովորողները։ Մեթոդական այս ընթացքը վերջին դասերին խիստ չի պահպանվում, վորովհետև շատ բան ավելորդ կրկնություն է դառնում։ Այսպիսի աշխատանքները նոր են կիրառվում մեր կյանքում, հաղիվ 2-3 տարվա անցյալ ունեն. բնական է, ուրեմն, վոր այս դասագիրքն ունենա թերություններ։ Ուստի կխնդրեյինք հասակավորների անդրագիտության վերացման գպրոցական գործին մոտիկ կանգնած մանկավարժներին և դասատուներին փորձից հանած իրենց դիտողությունները հաղորդել քաղուսգլխավարի գպրոցա-դասընթացային բաժնին։

Քաղաքական լուսավորության գլխավոր վարչության
գպրոցա-դասընթացային բաժին

I

ուսումը ուժ է

ուժ է ուսումը
ուսում ունես՝ ուժ ունես
ունես ուսում՝ ունես ուժ
ուժ ունես, ուսում ունես։

II

ու-սու-մը ուժ է
ու-սում ու-նես՝ ուժ ու-նես
ուսում ու ուժ ունես
ուժ ու ուսում ունես։

Զրույց.— Ի՞նչ է նկարած այս պատկերի վրա։
Ովքե՞ր են գնում դպրոց։
Ո՞ւմն է այժմ ուժն ել, ուսումն ել։

III

ուշ լինի՝ նուշ լինի

նուշ լինի՝ ուշ լինի
լինի ուշ՝ լինի նուշ
լինի ուժ՝ լինի ուշ
ուսում լինի՝ ուշ լինի
ուժ ու ուսումը նուշ լինի։

IV

ուշ լի-նի՝ նուշ լի-նի
ու-նի ու-սում, ու-նի ուժ
ու-մը լի-նի ու-սու-մը
լի ու լի ուժ ու-նի
ուշ է ելի նուշ է
ուժ ունի լի ու լի
ուշ ուսումը ելի ուժ ունի

Անգրագիտության վերացման դեկրետը հայտարարվեց 1921 թվի սեպտեմբերի 21-ին։

Հարցեր.— Ինչու փոքր հասակում գրել-կարդալ չեք սովորել։
Վերջերս ավելի շատ անգրագետ կա — գյուղում թե քաղաքում։
Ինչու գյուղում շատ կա։

V

ով կարդա՝ նա մարդ ա

ով մարդ ա՝ նա կարդա
նա կարդա, ով մարդ ա
նա մարդ ա, ով կարդա
ով ուժ ունի, նա կարդա

VI

ով կար-դա նա մարդ ա
ա-սում է կար-դա
նա ա-սում է ուշ է
ուշ լի-նի, ա-նուշ լի-նի
ով է մարդ
նա է մարդ, ով ուսում ունի

VII

նա մարդ ա
ա-սա սա
ու-սում, ուժ, ում, ուս
նա, ու-նի
սա կարդա, նա կար անի
ով կար ունի—սուս անի

ա	Ա
ս	Ս
ռ	Ռ
ն	Ն

VIII

շինականը շինարար է

շինարար է շինականը
շինական կարդա ու շինի
ասա, ուսումը ուշ է, ելի անուշ է
ով ուսում ունի, նա ուժ ել ունի
շի-նա-կա-նը շի-նա-բար է
շի-նա-կան կար-դա ու շի-նի

IX

շի-նի, լի-նի, ու-նի	բ Բ
ուշ է, ելի նուշ է	է Է
ում, ասում, մի, մարդ	մ Մ
կարդա, կար կարի	կ Կ

Նուռնե

Նուռնեի մարդը շինական է. նա ուսում
ունի, ուժ ունի—նա շեն է
Նուռնեն էլ ուսում ունի. նա կար էլ կանի
իլիկ էլ կը մանի ու շեն կը լինի

X

Ով վոր շինի՝ շեն կը լինի

շեն կը լինի՝ ով վոր շինի
ով կարդա ու շինի, շեն ու ուժով կը լինի
շինարար մարդը շեն կը լինի
մե-նակ մար-դը ան-ուժ է
մի-ա-սին շի-նի, վոր ա-վե-լի ու-ժով լի-նես

վոր, վար, վեր	վ	Վ
ով, որ, նոր	ո	Ո
կար ա-բա, վար արա	ր	Ր
ուժ, ու-ժը		
շինիր շինական		
շինիր շարունակ		
լի ու կիրակի		
շինիր ու շարիր		
կարդա ու վարիր		

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
1	2	3	4	5	6	7	8	9	10

Հարցեր.— Վիրյերորդ դասն ենք պարապում։
Ուրեմն քանի՞ դաս ենք պարապել։
Այժմ վիրյերորդ ամիսն է։
Քանի՞ շաբաթ է, դպրոց եք գալիս։

XI

Կարմիր դրոշակը շինականի դրոշակն է

շինականի դրոշակն է կարմիր դրոշակը
կար-միր դրո-շա-կը շի-նա-կա-նի դրո-շակն է

մեր դրո-շա-կը կար-միր է	դ	Դ
դրոշ, դաս, դու, դա	ր	Ր
դրոշակը, դա-սը, ու-ժը	շ	Շ
շեն, շինի, շիշ, նուշ	ն	Ն
լի-նի, ե-լի,	լ	Լ



Կարմիր դրոշակը ուժ ունի. ով վոր կարմիր դրոշակ ունի, նա ուժ էլ կունենա, ուսում էլ. ով ուսում ունի, նա շինարար ու շեն կը լինի*։

Յերևանի ազգաբնակության հարյուրից 50-ը կին է, այսինքն 50 տոկոսը կին է, 50 տոկոսը տղամարդ**։

---

* Միանիշ թվերից անցնել յերկանիշների։ Հարյուրը անցնելու միջոցին ոգտվել դեպքից և բացատրել տոկոսի գաղափարը. կենսական խնդիրներ և դիագրամներ կազմել։

** Հարցեր.— Յերբ կատարվեց Հայաստանի խորհրդայնացումը—1920, 29/XI։
Վիր թվին եր Ռուսաստանի մեծ հեղափոխությունը—1917, 7/XI։
Էլ ով կարմիր դրոշակ ունի. մեր դրոշակը ինչու՞ յե կարմիր։

XII

Ով աշխատի՝ նա ուտի

նա ուտի՝ ով աշխատի
աշխատիր, կարդա՛, շինիր—շեն կը լինես
ով աշ-խա-տի նա ու-տի

ու-տի, տի-բի | ր Ռ
աշ-խա-տիր, խո-սիր | ս Ս

Կարմիր աշխատավորը շինարար է
Աշխատիր վոր ուտես
Դաշտում աշխատիր, տանը սովորիր։

Մի ժամանակ աշխատավորը շատ աշխատում եր, դատարկ եր նստում։ Նա անուսում եր ու անուժ։ Ուժն ու ուսումը տերտերինը, դրամատերինն ու իշխանին եր։ Մեր որով ով աշխատի, նա կուտի. աշխատավորն իր վաստակի տերն է։



Հարցեր.—Այսոր վոբյերորդ դասն է։ Նայեցեք ժամացույցին—քանի՞ ժամ կա նշանակված. ինչո՞ւ (բացատրել—ցերեկ և գիշեր), որը քանի՞ ժամ ունի։

Ուսումը ուժ է
Ուսումը ուժ է | ու Ու ե Ե
Ուսում ունես՝ ուժ ունես
Ուսում ունես՝ ուժ ունես | մ Մ ս Ս ժ Ժ
Ուշ լինի՝ նուշ լինի
Ուշ լինի՝ նուշ լինի | լ Լ ի Ի շ Շ
Ով կարդա՝ նա մարդ ա
Ով կարդա՝ նա մարդ ա | կ Կ ն Ն
Շինականը շինարար է
Շինականը շինարար է | ա Ա ր Ր
Ով վոր շինի՝ շեն կը լինի
Ով վոր շինի՝ շեն կը լինի | վ Վ ո Ո

Ով աշխատի՝ նա ուտի
Ով աշխատի՝ նա ուտի | ր Ռ ս Ս
Կարմիր դրոշակը շինականի դրոշակն է
Կարմիր դրոշակը շինականի դրոշակն է | ը Ը դ Դ

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար
Մե-կը բո-լո-րի հա-մար՝ բո-լո-րը մե-կի

բո-լորը բեր | բ Բ
հա-մար հա | հ Հ

Դու ուսում ունես—հաշվիր.
հաշվիր մեկ մեկ բոլորին.
վուշ ու բամբակ ունես՝
մշակիր, մանիր, շորեր կարիր,
բամբակը լավ մշակիր, վոր շատ ստանաս, շատ
ել շոր կունենաս
Շինականն աշխատում է բանվորի հետ ու նրա համար։
Բանվորն աշխատում է շինականի հետ ու նրա համար։
Շինականը բանվորին տալիս է սնունդ։
Բանվորը շինականին տալիս է շորեր։

Գեղ կանգնի՝ գերան կը կոտրի

Գեղ կանգնի՝ գերան կը կոտրի
գեղ կանգ-նի՝ գե-րան կը կոտ-րի։

գե-ղան, գեղ, գեր, | գ Գ
գեղ, ղեղ, աղ, աղա | ղ Ղ

Կանգնիր ամուր շինական,
Գեղի տերն ու տիրական,
Երեկ աղեն եր տերը՝
Աղեն ու իր տերտերը.
Տերն ես հիմա ամենի
Գնա հանգիստ աշխատի։

Կանգնիր ամուր շինական,
Գեղի տերն ու տիրական,
Երեկ աղեն եր տերը՝
Աղեն ու իր տերտերը.
Տերն ես հիմա ամենի
Գնա հանգիստ աշխատի։

Սիրելի ընկեր

Նամակ եմ գրում, վոր իմանաս, վոր մեր գեղում հիմա գրագետ շատ կա։ Բոլորն աշխատում են գրել-կարդալ սովորել։

4—5 տարի հետո բոլորն ել գրագետ կը լինեն։ Եդ որը բախտավոր որ կը լինի մեր գեղի համար։ Շուտ-շուտ նամակ գրիր. տեսնում ես հիմա գրագետ եմ, կարող եմ նամակներդ կարդալ։

Բարևներ բոլորին
Ընկերդ

7/VIII

1897 թվին Կովկասի ազգաբնակչության գրագիտական վիճակը

Տղամարդկանց վոր տոկոսը %		Կանանց վոր %-ը		Տղամարդկանց և կանանց վոր %-ը	
Գրագետ	Անգրագետ	Գրագետ	Անգրագետ	Գրագետ	Անգրագետ
18%	82%	6%	94%	12%	88%

Համեմատել և կազմել շրջանաձև դիագրամներ։

Այսուհետև կարելի յե գրավոր աշխատանքների որվա և ամսաթիվը գրել տալ լրիվ կամ կրճատ ձևով (տես նամակը)։

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է

Կարմիր բանակը մեր յերկրի պաշտպանն է

յեր-կրի, յես, յեվ | յ Յ
պաշտ-պան | պ Պ

Ո՞վ է պաշտպանում մեր յերկիրը—
— Կարմիր բանակը։

Ո՞ւմ է պաշտպանում Կարմիր բանակը—
— Աշխատավորին։

Ո՞վ է կարմիր բանակայինը—
— Նույն աշխատավորը։

Այսոր նա սուր ունի, վաղը մանգաղ և արոր կունենա։

Կարմիր բանակայինը գրագետ է, վորովհետև ուսումն է ուժը. անգրագետն անուժ է։

Հարց.—Յերբ է Կարմիր բանակի տոնը։

Հողը գյուղացուն գործարանը բանվորին

Հողը գյուղացուն, գործարանը բանվորին

գոր-ծա-բան, գործ, ծուլ	Ծ ծ
գյու-ղա-ցի ցո-րեն ցա-նիր	Ց ց

Ցարերի ժամանակ բանվորն աշխատում եր 10—12 ժամ և ստանում եր միայն կոպեկներ։ Նա ապրում եր խավար ու խոնավ նկուղներում։ Ծուլ շահագործողները վայելում եյին նրանց վաստակը և ապրում եյին պալատներում, մեծ-մեծ տներում, լույս սենյակներում հանգիստ, անհոգ և ուրախ։

Գյուղացին ել եր շահագործվում։ Նա սակավահող եր, բայց կերակրում եր ծուլ ու անգործ ազանների մի մեծ բանակ։

Շահագործման ծանր լուծը այլևս անտանելի յեր աշխատավորների համար։

1917 թվի հոկտեմբերին բանվորն ու գյուղացին միացած տապալեցին ցարի լուծը և հաստատեցին իրենց խորհուրդները։

Խորհուրդներին մասնակցում են միայն բանվորն ու գյուղացին և նրանց պաշտպան կարմիր մարտիկը։

Ինչ որ ցանես՝ այն կը հնձես

Ինչ որ ցանես, այն կը հնձես

Ով ցանել ե՝	*ով ցանել ե՝*
վախ չունի,	*վախ չունի*
ով հնձել ե՝	*ով հնձել ե՝*
հոգս չունի.	*հոգս չունի.*

ձեր հունձը հնձիր	Չ չ
չունի, չե, չկա	Ձ ձ

Հնձվորը

Գյուղացին գնաց արտը,
ցորենը հնձեց,
խուրձեր կապեց,
սայլին բարձեց,
տուն բերեց։
Հոգս չունի, վախ չունի.
ցորենը շատ, հացը շատ։
Ինչ ցանել ե՝ հնձել ե.
Աշխատել ե՝ ուտում ե։



Կարմիր ռանչպար ձեռք տուր բանվորին

Կարմիր ռանչպար, ձեռք տուր բանվորին

ռանչպար, կուռ, կռիր | Ռ ռ
ձեռք-ձեռքի տանք մենք | Ք ք

Դու ռանչպար ես, իսկ յես՝ բանվոր,
մենք յեղբայր ենք, ընկեր հին.
մենք չենք տեսել ուրախ մի որ
ու լացել ենք դառնագին։

Հարցեր.—Ինչով է ոգնում բանվորը ռանչպարին, ինչ է տալիս նրան և փոխարենը ինչ է ստանում։

Կռիվն ահեղ կռեց ի մի
մեր բախտն ու կամքն անսասան.
ձեռք-ձեռքի տանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան։

Դու. ռանչպար ես, իսկ յես բանվոր,
մենք յեղբայր ենք, ընկեր հին.
մենք չենք չենք տեսել ուրախ մի որ
ու չլացել ենք դառնագին։
Կռիվն ահեղ կռեց ի մի
մեր բախտն ու կամքն անսասան.
ձեռք-ձեռքի տանք, գնանք հիմի
դեպի կարմիր ապագան։

Վոչ մի կարոր չցանած հող չթողնել

Վոչ մի կարոր չցանած հող չթողնել

Թե վոր ցանես, թե վոր հնձես, կուշտ կը լինես. անցան, անվար հող չը թողնես

Թողնել, թող, թող | Թ թ

Ընկեր

Յեթե դու հողդ չպարարտացնես, չվարես, չցանես, դատարկ կը նստես։ Հիմա դու ավելի շատ հող ունես, դու հողիդ տերն ես. լավ պարարտացրու, այդ մասին խորհուրդ հարցրու գյուղատնտեսից, սովորիր և ընկերներիդ սովորեցրու։

Աշխատեք ընդհանուր ուժերով մեքենաներ ձեռք բերել։ Այդ ձևով յեթե վարեք, ցանեք, հնձեք, կալսեք, դուք ել կուշտ կը լինեք, մեր յերկիրն ել կը շենացնեք։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Հ.Հ. Шуолинная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Որակաև 10 ժամ աշխատելով կարելի յե

Թվաբանական աշխատանքներ	Ձեռքով		Մեքենայով	
Կազմել նույն բնույթով խնդիրներ։	Ցանել .	3 դեսյ.	Ցանել .	5 դեսյ.
	Հնձել .	1/2 ,,	Հնձել .	5 ,,
	Խոտ հարել	1 ,,	Խոտ հարել	4 ,,

Կինը հիմա ազատ քաղաքացի յե

Կինը հիմա ապար քաղաքացի յե

ա-զատ, զատ | Ազ

Մինչև խորհրդային կարգերի հաստատվելը կինն իրավունքներից զուրկ եր. նա ազատ քաղաքացի չեր։

Նա առանց ամուսնու կամքի տեղից շարժվելու, ձայն հանելու իրավունք չուներ։

Հիմա կինը իր յերկրի շինարար գործերում մաս ունի։

Կինն իրավունք ունի ընտրելու և ընտրվելու։ Նա իր աշխատավոր յեղբոր և ամուսնու ազատ ու հավասար ընկերն ե. նրանց հետ վերաշինում ե մեր յերկիրը։

Գյուղումն ել կինը հիմա անխոս, անլեզու չե. նա ձգտում ե գրագետ լինել և միացել ե պրոլետարների հզոր բանակին։

Մարտի 8-ը աշխատավորուհու տոնն ե

Կազմել դիագրամներ.—Դասարանի վոր %-ը կին ե, վոր %-ը տղամարդ. քանիսն ե բանվոր, քանիսը արհեստավոր և այլն։

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.

Ձերն ե ուժը, ձերն ե կամքը,
ձերն ե իշխանությունը.
ուժեղ կռվի դուք պատրաստվեցեք.
ով ձեզ հետ չե,
նա կը հաղթվի։

Մեր տգիտությունից ու անմիաբանությունից գտվում և մեզ շահագործում եյին բուրժուաները հոգևորականները։

Հիմա այլևս չեն կարող շահագործել։—Կեցցե բոլոր յերկրների աշխատավորների միությունը։

Կեցցե ուսումն ու գրագիտությունը։

Անգրագետ

Ը վորդուց մայրը
ամակ ստացավ,
արոտած սիրտը
ԼԵր ու վար յեղավ։
այում ե նամակին—
իրուն նշաններ,
այց այդ գրերի
Միտքը չգիտեր։

Տղան ինչ ե գրել—
պետք ե իմանար,
բայց նրա տանն ել
կարդացող չկար։
Դուրս յեկավ փողոց,
մի քարի նստեց,
գյուղի դպրոցի
սանին պատահեց։

Յեվ նրան կանչեց.
«Դպրոցի տղա,
մոտս յեկ, ապրես,
նամակը կարդա»։

Հառաջ, դեպի հետ ճանապարհ չկա

Հառաջ, դեպի հետ ճանապարհ չկա

ճա-նա-պարհ, ճար, ճորտ, | Ճ ճ

ա-ռաջ, ջուր | ջ Ջ

Ճանապարհը դեպի հետ տանում է դեպի շահ
գործում, դեպի տգիտություն ու ստրկական վիճա

Մենք ջախջախել ենք բռնակալների, կալվածա
տերերի և կապիտալիստների ճնշումը։ Մեր բախտ
ու վիճակը հիմա մեր ձեռն է։ Մենք քանդել են
մեր հետևից բոլոր կամուրջները։ Մենք գնում են
առաջ, դեպի հետ ճանապարհ չկա։

Մենք ջախջախեցինք հին աշխարհը
ու շինում ենք նոր աշխարհ,
ուր վոչ աղա կա, վոչ ստրուկ,
վոչ ճորտեր կան, վոչ տզրուկ։

Բոլոր ֆրոնտներում մերն է հաղթանակը

Բոլոր ֆրոնտներում մերն է հաղթանակը

Ֆրոնտ-ներ, Ֆրոնտ | Ֆ ֆ

1.—Առաջին ֆրոնտն արտաքին և ներքին ռազ
մական ֆրոնտն եր։

Մենք հաղթեցինք այդ ֆրոնտում։

2.—Յերկրորդ ֆրոնտը շինարարական ֆրոնտ
եր։ Մենք վերականգնեցինք գործարանները, ժշ
կեցինք հողն ու հանքը, հաղթահարեցինք սովը, ծա
կեցինք մեր մերկությունը։

3. — Յերրորդ ֆրոնտը լուսավորության ֆրոնտն
է։ Մենք տգետ եյինք և անգրագետ։ Մենք ճիգ ու
ջանք ենք դնում գրել-կարդալ սովորելու, լուսա-
վորվելու։ Լուսավորության ֆրոնտումն էլ մենք կը
հաղթենք։

Մնացել է բերդը մեզ.
հաղթանակի յերթը մեզ.
անց են կացել ով կային.
հիմի յեկավ հերթը մեզ։

Փառք ընկածներին

Փա՜ռք ընկածներին

Փառք | Փ փ

Մեր հեղափոխական ուղին փշոտ է յեղել։ Հեշտ
չի փշրվել դարևոր ամրապնդված սև ուժը—կապի-
տալի և յեկեղեցու միությունը, թագավորի բռնա-
կալությունը։

Այդ սև ուժի ձեռքն եր զենքն էլ, զորքն էլ,
հողն էլ, մեքենան էլ։ Աշխատանքի ազատագրման
մեծ կռվում մենք թանգագին զոհեր ենք ունեցել.
որանց արյան գնով ենք մենք փրկվել։ Նրանք մե-
ռան, բայց նրանց գործն անմահ է։

Փառք մեծ գաղափարի զոհերին։

Կոմմունիզմի համաշխարհային առաջնորդները եյին—

Կարլ Մարքս

Ֆրիդրիխ Ենգելս

Վլադիմիր Իլյիչ Ուլյանով-Լենին

Ամեն մի պետություն ունի իր գերբը. խորհրդային բոլոր յերկրների գերբը մուրճն ու մանգաղն է։

Խորհրդային Հայաստանի գերբի նշանագրերն եկ

Հ. Ս. Խ. Հ.



Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։

1922 թ. 30 դեկտեմբերի բոլոր մանր հանրապետությունները՝ Խորհրդային Ռուսաստանը, Ուկրայնան, Բելորուսիան, Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանը միացան և կազմեցին Ս. Խ. Հ. Մ. վոր նշանակում է՝

Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն։

Որացույց

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՆԵՐԻ ՅԵՎ ՍԳՈ ՈՐԵՐԻ

1. Հոկտեմբերյան Հեղափոխությունը — 7 նոյեմբերի
2. Փետրվարյան Հեղափոխությունը — 12 մարտի
3. Բանվորուհիների միջազգային տոն — 8 մարտի
4. Պրոլետարիատի միջազգային տոն — 1 մայիսի
5. Միջազգային յերիտասարդական որը—յուրաքանչյուր սեպտեմբերի I կիրակին.
6. Բանվորների գնդակահարումը Պետերբուրգում ցարի հրամանով և Վ. Ի. Լենինի մահվան որը 22 հունվարի (9 հունվ.).
7. Ս. Խ. Հ. Մ-ն. տոնը — 6 հուլիսի.
8. Հայաստանի Խորհրդայնացում — 29 նոյեմբերի։

Ա ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Ը ը			
Ա ա	Բ բ	Գ գ	Դ դ	Ե ե	Զ զ	Ը ը			
Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Ծ ծ	Կ կ			
Թ թ	Ժ ժ	Ի ի	Լ լ	Խ խ	Ծ ծ	Կ կ			
Հ հ	Ձ ձ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն	Շ շ		
Հ հ	Ձ ձ	Ղ ղ	Ճ ճ	Մ մ	Յ յ	Ն ն	Շ շ		
Ո ո	Չ չ	Պ պ	Ջ ջ	Ռ ռ	Ս ս	Վ վ	Տ տ		
Ո ո	Չ չ	Պ պ	Ջ ջ	Ռ ռ	Ս ս	Վ վ	Տ տ		
Ր ր	Ց ց	Փ փ	Ք ք	Ֆ ֆ	Ու ու				
Ր ր	Ց ց	Փ փ	Ք ք	Ֆ ֆ	Ու ու				
1	2	3	4	5	6	7	8	9	10
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X





ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Հատիկ

Լույսը բացվում է, շուտ արտը գնամ,
պատռեմ սուր խոփով յես կուրծքը հողի,
իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ
մինչև որերը ամռան արևի։
Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ։
Ծլիր, կանաչիր, վոսկե սավանով
ծածկիր իմ արտը վողջ ալեծածան։
Նոր այն ժամանակ անուշ շրշյունով
տուր ջարդված սրտիս մի քուն հանգստյան։

Յերկրագործ

Արև չծագած մաճն է քո ձեռին.
յոթ զույգ յեզ, գոմեշ լծած գութանին
ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան,
լեռներ ու դաշտեր, հանդ ու անդաստան։
Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
հաճար ու վարսակ, բամբակ ու բրինձ։
Ծլում են ծաղկում ճակտիդ քրտինքով
քո վարած դաշտեր, վոր լի յեր փշով։
Անցնում է գարուն. վոսկեգոծ հասկեր
լրցնում, ծածկում են քո սիրուն արտեր։

Քամին փչում է, արտը տատանում.—
կարծես նոր հարս է, հերանց է գնում։
Հասել է ամառ. մանգաղը ձեռիդ
հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում։
Խուրձերը բարդ-բարդ կրում ես, բերում
ու առատությամբ կալումդ դիզում։
Հաշան ես անում, կալսում ու զատում,
մաքուր ցորենը տանդ ամբարում,
իսկ չոր դարմանը ձմեռվա պաշար
մարագդ լցնում անասնոց համար։
Յեվ յերբ փչում է ցրտաշունչ ձմեռ,
խրճիթում նստած քո խոփն ես սրում,
արոր ու գութան սարքում պատրաստում
ու գարնան գալուն նորից սպասում։
Ո՜հ, յերկրագործ, յերկրագործ,
վորքան սիրուն է քո գործ։

Ապրողների հաշար

Յոթանասուն տարեկան ծերունին պարտեզի մեջ տանի ու խնձորի ծառ եր տնկում։ Շատ աշխատելուց խեղճը ըտնել, ջուր եր դառել։

Մի յերիտասարդ տեսավ ծերունուն և ասաց. «Ծերուկ, ինչու՞ յես իզուր նեղությունն քաշում, ինչու՞ յես տանջվում, արշարվում. մինչև այդ ծառերը արմատ բռնեն, մեծանան, պտուղ տան՝ դու կը մեռնես»։

—Իհարկե կը մեռնեմ, — պատասխանեց ծերունին, —բայց ինչպես յերևում է՝ դու կարծում ես, թե մարդ միայն իր համար պիտի աշխատի։ Վոչ, վորդիս, ուրիշների համար էլ պիտի մտածեք։ Ահա, տնկում եմ այս ծառերը. թող սրանք մեծանան, պտուղ տան։ Թող յես մեռած լինեմ, ինչ անենք.—թող ուրիշներն ուտեն։

Արևը

(Մոտիկ անցյալից)

Լսեցեք, ընկերներ, յես կը պատմեմ ձեզ իմ վոսկեհեր աղջկա մասին։

Նա հիվանդ եր։

Բժիշկը մտավ մեր բնակարանը, տխուր նայեց չո
կողմը, նայեց աղջկաս ու ասաց.

— Խոնավ է, պետք է փոխեք ձեր բնակարանը, արև
սենյակ պետք է ճարեք։

Ու յես գնացի արև փնտռելու։ Շատ հեռու գնացի ո
վերջապես, գտա մի արևով սենյակ։ Բայց յերբ վեր
գարձա, աղջիկս ինձ կանչեց, ձեռս բռնեց ու փակեց ա
քերը։

Կարմրած ու ցամաքած աչքերով գնացի արևի մ
ասացի.

—Հզոր արև, մի մեծ բողոք ունեմ քո դեմ. ինչ
դու մի շողք խնայեցիր իմ աղջկան ու թողիր, վոր նա
ռանց արև մնա. դու սպանեցիր նրան։

—Վոչ,—ասաց արևը տխուր դեմքով.—յես մեղավ
չեմ.— գնա, հայտնիր ամբողջ աշխարհին, վոր վեր
հարկը խլեց արևի շողքերը, ստվեր ձգեց ներքևի հար
վրա ու սպանեց քո վոսկեհեր աղջկան...

Կանանց աշխատանքի ապահովումը խորհրդային իրավակարգում.

1. Կանայք չեն մասնակցում գիշերային աշխատան
ներին.

2. Կանայք ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և
շաբաթ հետո ազատ են ֆիզիքական աշխատանքներից, պա
հելով ռոճիկ ստանալու իրավունքը։

3. Ծծկեր յերեխա ունեցող մայրը, բացի ընդհանու
հանգստի ժամերից, ոգտվում է նաև առանձին սահմանվա
ժամանակով մանկանը կերակրելու համար։

Խորհրդային իշխանությանը հարկավոր է առողջ յերեխաներ

Մահը յերկու անգամ ավելի զոհ է տանում անգրագե
ընտանիքից։

Մոր անգրագիտությունից շատանում են մահվա
դեպքերը։

Յեթե խոսել կարողանայի, յես կասեյի.

— Մի համբուրեք իմ շրթունքներից։

— Ցերեսիս մի հազաք և փռշտաք. յես կը հիվանդանամ ու ինձ վատ կզգամ։

— Կարմրուկից, կապույտ հազից և ուրիշ վարակիչ հիվանդություններից հեռու տարեք ինձ. կարող եմ վարակվել և մեռնել։

— Թևներիդ յերկար մի պահեք ինձ, այլ հանգիստ պառկեցրեք իմ անկողնում։

— Քաղցրեղեններ և ուրիշ փնասակար բաներ չտաք։

— Բերանս ծծակ չդնեք, չթողնեք ժատներս ծծեմ։

— Հյուր մի տանեք ինձ, վոչ ել կինո կամ թատրոն. յես կը ջղայնանամ և վատ կը քնեմ։

— Քնացնելիս չծեծեք և չպատժեք ինձ։

— Զթմրացնեք ինձ խաշխաշով։

— Գինի, գարեջուր, ոդի, սուրճ, թեյ մի խմեցնեք, յես ուզում եմ առողջ լինել։

Հարբեցողության ազդեցությունը ծննդաբերության և մանուկների մահացության վրա։		
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄ	Անհաջող ծննդաբեր.	Մանուկների մահաց.
Զգաստ (վոչ հարբ.)	1,8%	13%
Զափավոր խմողներ	5,3%	23,2%
Շատ խմողների	7,1%	32%

Գյուղ ու քաղաք—ուժը հավաք

Գյուղից քաղաք են տանում—հաց, միս, յուղ և ուրիշ սննդամթերքներ։ Քաղաքը պետք ունի գյուղի գանազան ապրանքների՝ վուշի, կանեփի—քաթան պատրաստելու, բազուկի—շաքար շինելու և այլն։

Քաղաքից գյուղ են փոխադրվում— շաքար, աղ, ասեղներ, թել, յերկաթ, մեխ և այլն ապրանքներ։

Գյուղի համար ել շատ բան ե պետք—գութաններ, փոցխեր, գերանդիներ, մանգաղներ և զանազան մեքենաներ, վորոնցով շուտ ե գործ տեսնվում։

Քաղաք տեղի գրագիտությունն ավելի յե։ Այնտեղ բարձրագույն դպրոցներ ել կան, վորտեղից դուրս են գալիս գյուղատնտեսներ, յերկրաչափներ, ճարտարագետներ և ուրիշ շատ տեսակի մասնագետներ։

Քաղաքումն ե, վոր տպվում են գրքեր, որացույցներ, լրագիրներ և ամսագիրներ։ Դրանցից ե, վոր իմանում ենք, թե ինչպես պիտի ուղղենք մեր կենցաղն, ինչպես գիտությունը գործ դնենք մեր ոգտին։ Դրանք հարկավոր են քաղաքին ել, գյուղին ել։

Քաղաքը չի կարող ապրել առանց հացի և ուրիշ մնընդամթերքների. գյուղն ել առանց քաղաքի անճարակ ե. մի յերկու տարի գլուխ կը պահի, բայց հետո փայտով պետք ե վարի, ցանի։

Գյուղ ու քաղաք—ուժը հավաք։

Ոգնիր կոոպերատիվի զարգացմանը

Մեզ մոտ աշխատավորների իշխանություն ե, բայց առևտուրը դեռ ել բոլորովին պետության ձեռքը չի անցել։

Յերբ ամբողջ առևտուրը անցնի կոոպերատիվներին, այն ժամանակ ապրանքներն ավելի եժան կը լինեն։

Կոոպերատիվը ուժեղ ե իր անդամների շնորհիվ. դրա համար պետք ե հաճախես կոոպերատիվի ժողովները, ոգնես նրան թե խորհուրդներով, թե գործով։

Միտդ պահիր հետևյալը.

1. Կոոպերատիվի վարչության մեջ չարչիներ և կուլակներ չընտրես.

2. Ամեն ինչ գնիր կոոպերատիվից, վոչինչ մասնավորից.

3. Ինքդ անդամագրվիր և կանոնավոր վճարիր քո անդամավճարը.

4. Գիտցիր, վոր կոոպերատիվը իր շահածը չի կրկնապատկում.

5. Հետևիր, վոր կոոպերատիվում գրքեր ևս ծախվին հասակավոր անգրագետների համար։

Հարց.— Կոոպերատիվի անդամ ես թե վոչ. գրեցեք տեղական կոոպերատիվ խանութի անունը և հասցեն.
Կազմեցեք ձեր ամսական ծախսերի ցուցակը.
Համեմատեցեք կոոպերատիվի գները շուկայի գների հետ։

Ամառային գիշերը գյուղում

Լուսընկա գիշեր,
Յերկինքը պայծառ.
Անհամար աստղեր
Փայլում են վառ վառ։

Քնած ե այնտեղ
Հայի հին գյուղը,
Մթնած և լուռ ե
Գյուղացու խուղը։

Յեվ ժիր գյուղական
Ընտանիքն ահա
Սրահում, կալում
Կամ կտրի վրա՝

Խոնջացած որվան
Դառն աշխատանքից,
Վոտնուծոց արած՝
Քնած են հանգիստ։

Միայն աղմկում ե
Այս լռությունը
Գյուղացու սայլի
Խուլ ճռընչյունը։

Յեվ նրա գլխին
Կանգնած գյուղացին
Հորովել ե յերգում,
Հանգիստ ե հոգին։

Ջրի կաթիլի ճանապարհորդությունը

— Ա՛խ, ինչպես կուզեմ վերև բարձրանալ, վերև՛, շատ վերև, են սարի գլխին, են ամպի մոտը, արևի քով, աստղերին հասնել,—ասաց մի կաթիլ։

— Յես ել եմ ուզում, յես ել,—ձայն տվին ծովից շատ կաթիլներ.—վերև բարձրանալ, վերևից նայել, թե ինչ կա այստեղ աշխարհի վրա։ Ենտեղից տեսնել սարեր, ձորեր, անտառներ, դաշտեր, քաղաքներ, ծովեր։ Ա՛խ, ինչ լավ կը լիներ։

II

Արևը լսեց, տաք ճառագայթներ ուղարկեց, ջրի կաթիլներին վերև կանչեց։ Մեր կաթիլները քիչ-քիչ տաքացան, անտեսանելի գոլորշի դարձան, վերև բարձրացան։

Նրանք շատ, շատ բարձրացան, սարերից ել վերև, ամպերին մոտեցան։

— Եստեղ ինչ ցուրտ ե,—ասաց մի կաթիլ և կուչ յեկավ.—վերևում դժվար ե ապրել։

— Այո, այո,—ձայն տվին ամենքը,—ինչ լավ կը լիներ, ամառվա պես ներքևում լինեյինք։

III

Արևը լսեց. ցուրտ քամի ուղարկեց։ Գոլորշիները ցրտից կուչ ու ձիգ արին, իրար մոտեցան, կամաց-կամաց սեղմվեցին իրար և տեսանելի ամպ դարձան։

— Ի՞նչ մութ ամպեր են,—ասացին մարդիկ ներքևում։

— Ես ինչպես ցուրտ ե, ինչ պաղ քամի յե,—ասացին ամպ դարձած գոլորշիները, ավելի իրար մոտեցան, նորից կաթիլներ դարձան։

IV

— Բարև ձեզ, բարև, սիրելի ընկերներ,—ասացին կաթիլները իրար։ Ա՛յ, հիմա լավ ե։ Ի՞նչ լավ յեղավ, վոր ելի կաթիլ դարձանք։

— Ի՞նչ լավ անձրև ե գալիս,—ասացին մարդիկ յերկրի վրա։

Խումբ-խումբ կաթիլներ գոռում-գոչյունով ներքև են վազում, հողը պատառում, ծաղիկ ու ծառ արմատախիլ անում և առաջ գնում։

V

— Ի՞նչ սոսկալի հեղեղ ե,—ասացին մարդիկ։

— Ցեռ շտապում եմ, շուտ ճամպա տվեք,—ասում եր հեղեղը և առաջ գնում։

Այսպես նա շատ առաջ գնաց, հասավ մեծ գետին։

Հեղեղն այստեղ շուտով կուլ գնաց ու սկսեց գետի հետ հանդարտ հոսել։

Մեր կաթիլներն այսպես վերջապես հասան ծովին՝ իրենց մոր գիրկը։

— Բարով յեկաք, իմ կաթիլներ,—ասաց ծովը և գրկեց նրանց։

Լենինյան Կոմունիստական յերիտասարդական միություն (Կոմսոմոլ)

Հասակավոր բանվորական կազմակերպությունների հետ միասին զանազան յերկրներում գոյություն ունեն նաև աշխատավոր յերիտասարդության կազմակերպություններ—նրանք կազմում են Լենինյան Կոմյերիտմիություն։

Ցարի ժամանակ յերիտասարդական կազմակերպություն չկար. ցարական իշխանությունը խիստ հալածում եր ամեն տեսակի կազմակերպությունները։

Հոկտեմբերյան հեղափոխության մեջ յերիտասարդությունը շատ մեծ մասնակցություն ունեցավ և ամեն տեղ առաջին շարքերումն եր։

1918 թվին Մոսկվայում հավաքվեց I Համառուսական Կոմյերիտմիության համագումարը։

Կոմյերիտմիությունը մեծ յեռանդով ոգնում ե խորհրդային իշխանությանը նրա շինարարական աշխատանքների մեջ։

Կոմյերիտմիության ազդեցությունն ավելի մեծ ե գյուղում. գյուղական յերիտասարդությունը Կոմյերիտմիության ղեկավարությամբ առաջ ե տանում գյուղի նոր շինարարությունը։

Կոմսոմոլի զատիկը

Զատիկ բերեց կանաչ գարուն
մեր դաշտերին ու ձորերին,
աշխատանքը հնչեց յեռուն
մեր գյուղացու յերակներում։

Զատիկն յեկավ կանաչներով,
հաղթ ու կարմիր ջահելներով.
Կոմսոմոլն յեկավ գեղով
կարմիր խոսքով, կարմիր յերգով։

Տերտերները ահ ու դողով,
ֆարաջաներն ուսերին
տափ են մտնում խորաններում՝
«տեր վողորմյան» բերաններում։

Կոմսոմոլը գեղի միջով
անցնում հպարտ ու խիտ շարքով
աշխատանքի հզոր յերգով
ամբողջ գեղը թնդացնելով։

Վողջունում է կարմիր գարնան,
վոր դուրս քշեց ցուրտ ձմեռվան.
վողջունում է աշխատանքը,
վոր ստեղծում է ամեն բան։

Ու յերգում է Կոմսոմոլը.—
«Աշխատանքի տոնն է եսոր.
տերտերները հեռու կանգնեն,
բավական է գեղին խաբեն»։

Ու յերգելով՝ գեղի միջով
անցնում են մեր ջահելները.
տերտերները ահ ու դողով
պահ են մտնում խորանները։

Սերմնացան մեքենա

Ցանել կարելի յե ձեռքով կամ մեքենայով։ Ձեռքո
դժվար է արտը հավասար ցանել։ Մեքենայով ցանքս
ավելի արագ է կատարվում. մինչդեռ ձեռքով մի որու
3 դեսիատին հազիվ կարելի յե ցանել, մեքենայով մինչ
5 դեսիատին կարող ենք ցանել։

Մեքենայով ցանքսը լինում է շարքերով և սերմ
քիչ է գնում՝ դեսիատինին 8 փութ. այն ինչ ձեռքով ցան
լիս դեսիատինին գնում է 12 փութ։

Մեքենայով ցանելիս սերմերն արտում հավասար խո
րության են ընկնում ու ծլում են միաժամանակ ու մ
բարձրության։ Ձեռքով ցանելիս սերմերի մի մասը խոր
թաղվում կամ յերեսն է մնում ու չի ծլում։

Սերմնացան մեքենայով ցանքսը լավ է դուրս գալիս
Սերմը սերմին չի խեղդում, բոլոր սերմերն ել ազատ ա
ճելու տեղ ունեն։

Շարքերը լայն յեղած դեպքում անպետք խոտերը կա
րելի յե քաղհանել։

Մեկի ուժը չի պատիլ սերմնացան մեքենա գնելու
բայց վոր շատվոր լինեն—ամեն մեկին քիչ ծախս կը նստի

Նոր առավոտ.

Ի՞նչ եմ անում մենակ կյանքը,
վոր խեղճ մնամ ու զրկված.
ձեռքս կը տամ իմ ընկերոջ
ու միշտ կանեմ սիրտս բաց։

Դե, ռանչպարներ, վոտքի յելնենք,
մեզ է սպասում խաչ դաշտը.
մեկի տեղը հազար յելնենք,
մեզ է կանչում նոր կյանքը։

Տերտերի գործադուլը.

Տեր Բարսեղը դժգոհ եր.
իրեն տված հասույթը
շատ քիչ եր։
Հին որերից սովոր եր
լցնել իր ամբարները։
Ել քարոզել,
ել բողոքել,—
վոչինչ չոգնեց...
Բայց լսել եր,
թե բանվորն ել
մի բան վոր ուզեր
ու չարանար,
գործադուլ
կը հայտարարեր։
Ուզեց ինքն ել
ճիշտ այդպես
հայտարարել
գործադուլ.
Քրիստոսի հարությունից
մի որ առաջ
յեկեղեցու դուռը կողպեց,
տիրացուին հետն առած
տանը նստեց,
հայտարարեց
գործադուլ.—

Մինչև տան գլուխ
իրեն չեն տա
մի-մի վոչխար,
տիրացուին՝
մի-մի հատ ուլ,—
աղոթք չկա,
յեկեղեցու դուռը չի բանա։
Տեր Բարսեղը շատ հույս
ուներ.—
զատիկ որ եր.
զատիկ որով յեկեղեցու
դուռը փակել,—
գիտե՞ք թե եդ ի՞նչ ասել
եր...
—Ինչ պիտի անեն,
ուզեն չուզեն, պիտի բե-
բեն...
Կը կակղեն...
Զատիկ որով
ժողովուրդը հավաքվել,
թունդ վիճում է,
մտածում է՝
ինչ անել...
Ել թեր ու դեմ...
վրճռում են եղպես թողնել,

մինչև տերտերը խելքի գա,
ինքը բանա...
Տեր Բարսեղը տանը նստել
սպասում է՝
թե գյուղացին հավա-
քում է
վոչխար և ուլ
դուռը բերի...
սպասում է մինչ իրիկուն.
...Վայ է տալիս իրեն
գլխուն.—

ՁԵռավել եր ելի ինքը.
ձեռքից եղպես
բաց եր թողել
առուտուրի հաջող որը,
պատարագն ու տնորհնեքը,
«գյալուրները».
Գործադուլը
տունը քանդեց.
գործադուլը
վիժեց.

Կովի կերակրելը.

Գյուղացին իր կովը կերակրում է գլխավորապես խոտով, դարմանով և քիչ է տալիս աղած-մանրած կեր՝ ալյուր, թեփ, քուսպ։ Խոտը շատ անգամ գետին է թափվում, և կովը կերի մի մասը կոխկրտում է։ Կովերը կապում են մութ գոմերում, խեղդված ոդի մեջ։

Կովից շատ կաթ ստանալու համար պետք է ամենից առաջ վերացնել խնամքի հիշված թերությունները, պետք է գոմը տաք և լուսավոր լինի։ Իսկ ամենագլխավորը, պետք է կեր տալ կովին նրա կենդանի քաշի համեմատ։

Մեզանում կովի միջին կենդանի քաշը 9 փութ է, իսկ տված կաթը 8 գրվանքա։

Այս տեսակ կովին որեկան պիտի տալ 18 գրվանքա խոտ, վորպեսզի նա չնիհարի և կաթը չպակասեցնի։ Սովորաբար կովին այդքան խոտ չեն տալիս, այլ ավելացնում են ավելի ուժեղ կեր, որինակ՝ թեփ (նայիր հաջորդ գլուխը) և կամ ավելի անուժ կեր, որինակ՝ ծղնոտը, բալումը

Դանիայում գյուղացիները հաշվել տեսել են, վոր 1 գրվանքա թեփով կարելի յե փոխարինել 3 գրվանքա խոտ կամ 6 գրվանքա ծղնոտ-բալում։

Մի կերը մյուսով փոխարինելու ժամանակ, վորպեսզի հաշիվը ճիշտ լինի, ընդունված է միշտ ել ուժեղ կերով որինակ՝ թեփով, ալյուրով կազմել կերի հաշիվը, մի գրվանքան կերի մի միավոր հաշվելով։ Այդպիսով 18 գրվ խոտն անում է 6 միավոր կեր, վորովհետև մի միավոր կերը հավասար է 3 գրվ. խոտի։

Այս 6 միավոր կերը կարելի յե զանազան տեսակի կերերից ստանալ։

Կեր տալիս են այսպես.

Տարիների փորձից պարզվել է, վոր կենդանի քաշը 3 փութ մսին պետք է որեն 1 միավոր կեր։ Այդ՝ մարմինն անվազ պահպանող կերն է։ Դրանից կովը կաթ չի շինում, բայց չի յել նիհարում։

Կաթ ստանալու համար կովին պետք է տալ յուրաքանչյուր 3 գրվանքա կաթի դիմաց մի միավոր կեր՝ չհաշված յուրաքանչյուր 3 փութ քաշին տված մեկական միավոր կերը։

Իմ կովը տալիս է որենը 12 գրվ. կաթ և ունի 12 փութ ել կենդանի քաշ։ Հաշվենք տեսնենք՝ քանի՞ միավոր կեր պետք է տալ նրան։

Ձերը հաշվեք, կը տեսնեք, վոր իմ կովին 8 միավոր կեր է հարկավոր։

Ծանոթություն. Կովը կշռել դժվար է, ուստի քաշը վորոշում են չափելով։ Չափում են ուսի ծայրից մինչև պոչի արմատը՝ դնելով կովը հորիզոնական դրության մեջ. ասենք յեղավ 16 վերշոկ։ Ապա չափում են իրանի հաստությունը առաջին վոտների թիակների յետևից. ասենք յեղավ 30 վերշոկ։ 16×30=600 գրվ. կամ 15 փութ—կը լինի կովի քաշը։

Հարցեր 1. Վորոշեցեք ձեր կովի քաշն ու կաթի քանակը։
2. Հաշվեցեք՝ որական քանի՞ միավոր կեր պիտի տաք ձեր կովին։
3. Կազմեցեք կերի միավորների աղյուսակ ձեր կովի համար ցածում բերած որինակով։

Ցանկ կերի միավորների.

Ուժեղ կեր.

1 գրվ. ալյուրեղեն 1 » թեփ 3/4 » քուսպ՝ կտավհատի, բամբակի և արևածաղկի։	1 միավոր

Չոր յեվ կոշտ կեր.

3 գրվ. մարգագետնի չոր խոտ 4 » ճահճային » » 2—2½ գրվ. չոր. առվույտ 4—5 » գարնցան դարման 5—6 » աշնցան »	1 միավոր

Կանաչ կեր.

12 գրվ. կանաչ խոտ 8 » » առվույտ 15 » բազկաթեր 13 » կաղամբաթեր	1 միավոր

Հյութեղ կեր.

8—10 գրվ. բազուկ 8 » գազար 6 » կարտոֆիլ	1 միավոր

Կովիս տալիս եմ՝

6 գրվ. 2 միավոր խոտ 2 » 1 » առվույտ 7 » 1 » դարման 3 » 4 » քուսպ	

Կովս չի նիհարում և շարունակում է միաչափ տալ իր կաթը։

Բանջարանոցի ոգուտը.

Բանջարանոցը պահանջում է աշխատանք և գիտություն։ Բանջարանոցի համար լավ հող է պետք, ուժեղ պարարտացում, ջուր և լավ գործիքներ։

Բանջարանոցը պիտի պատրաստել աշունքվանից։

Մի կոկիկ բանջարանոց կարելի յե սարքել 80 մարգից։ Յուրաքանչյուր մարգը 1½ արշին լայնության և 10 սաժեն յերկարության։ Ամեն մարգին 1 սայլ գոմի աղբ պիտի տալ։

Գլուխ կաղամբը 1 մարգից տալիս է 100 գլուխ՝ 5 կոպեկ արժողությամբ յուրաքանչյուրը։

Մի մարգ տալիս է 5 ռուբլի ոգուտ։

Մի մարգից 3 փութ սեխ է ստացվում՝ փութը 2 ռուբլի. ուրեմն մի մարգից 6 ռուբլի։

Մի մարգից 2000 հատ վարունգ է ստացվում. 100-ը 2 ռուբլի. ուրեմն մարգից 4 ռուբլի։

Բոզկը ցանում են մարգի կողքերին. մի մարգից 50 կոպեկ միշտ տալիս է։

Հարցեր. Կազմեցեք աղյուսակ ձեր սերմած բանջարների. վորքան եք հավաքում, վորքան ծախում և վորքան թողնում ձեր տնտեսության համար։

Կարտոֆիլ.

Մեզանից 100 տարի առաջ գյուղացիք կարտոֆիլին սատանի խնծոր անունն էին տալիս և նրա ուտելը մեղք համարում։

Այժմ տեղեր կան, ուր գյուղացու հողի մեծ մասը կարտոֆիլն է բռնում։

Կարտոֆիլ տնկելը շատ ոգտավետ է։ Մի դեսյատին կարտոֆիլը 3—4 անգամ ավելի ոգուտ է տալիս, քան հացահատիկը։ Կարտոֆիլին պետք է ուժեղ, թեթև և մաքուր հող։

Կարտոֆիլի հողը լավ մշակում են և տնկելուց հետո շարունակ քաղհանում, փխրացնում են։

Հաջորդ տարում կարտոֆիլի հողը շատ հարմար է հացահատիկ ցանելու, վորովհետև անպետք խոտերը քաղհանվել են։ Կարտոֆիլի հողը պարարտացնում են մոխիրով։ Կարտոֆիլից պատրաստում են ալյուր, շաքարաջուր, ոսպա։

Բամբակ.

Հայաստանը բամբակ ցանելու լավ շրջաններ ունի։ Յերևանի գավառում — Ղամարլու, Հրազդան, իսկ Եջմիածնում՝ Ղուրդուղուլի, Զանգիբասարի և Սարդարաբադի շրջանները։

Պատերազմների շնորհիվ բամբակի արդյունաբերությունը ընկավ։ Այժմ, յերբ բանվորն ու գյուղացին կպել են շինարար աշխատանքի, պետք է բամբակ մեծ չափով ցանել։

Ունենալով մեծաքանակ բամբակ՝ մենք հացի կարիք չենք զգա։

Խորհրդային Ռուսաստանը հաց շատ ունի, բայց բամբակ չունի։ Յերբ մենք բամբակ ունենանք, ամեն ինչ կունենանք՝ հաց, հագնելիք, մեքենաներ, մանգաղ, գերանդի և այլն։

Այդ ամենն ել իրենց վոտքով կը գան բամբակի մոտ։

Բամբակը թանգացել է թե Խորհրդային Ռուսաստանում և թե ամբողջ աշխարհում, իսկ հացը եժանացել է, ուրեմն այժմ ձեռնտու յե բամբակ ցանել և վոչ թե ցորեն։

Ինչ կարելի յեր ձեռք բերել պատերազմից առաջ մի փութ բամբակով՝

Ցորեն 12 փութ,
կամ չիթ 70 արշին,
» նավթ 10 փութ,
» աղ 30 փութ։

Ահա թե ինչու Հայաստանի բամբակագործության կոմիտեն աշխատում է բամբակի ցանքսերը ավելացնել։

Ճախարակ.

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ մալանչներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հագամ իմ ցավեր։

Ձեթ եմ ածել ականջներդ,
նոր շինել եմ շրավիկ.
դե՛հ, շո՛ւտ շարժիր լայն թևերդ,
վոստեր շինիր սրուլիկ։

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
լիսեռնիկդ պտտիր,
մանիր թելեր հաստ ու բարակ,
իլիկիդ վրա փաթաթիր։

Տիզրանիկս գուլպա չունի,
հանդ է գնում վոտաբաց.
Գարրիելս չուխա չունի,
միշտ անում է սուգ ու լաց։

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
մանիր սպիտակ մալանչներ,
մանիր թելեր հաստ ու բարակ,
վոր յես հագամ իմ ցավեր։

Ընկ. Լենինի գործը.

Վողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մի առաջնորդ ունեյին. դա ընկ. Լենինն եր։ 30 տարի շարունակ նա բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության ազատագրման գործի գլուխն ու սիրտն եր, նա յեր կռվի պլան գծողը։

Յերբ բանվոր դասակարգը հաղթվում եր, Լենինն եր, վոր խորհուրդ եր տալիս չհուսահատվել, այլ մի փոքր նահանջել՝ կռիվը նոր ուժերով վերսկսելու համար։ Այսոր բանվորներն ու գյուղացիներն իշխանությունն իրենց ձեռքում ամուր պահած ունեն։ Բայց ինչպես են պահում։ Դրա պատասխանն ել ընկ. Լենինը տվեց։—Խորհրդային իշխանությունը պահելու համար բանվորն ու գյուղացին միասին պիտի գործեն։ Նրանք ձեռք ձեռքի տված պիտի աշխատեն մեր յերկիրը շենացնել։ Միայն այս պայմանով խորհրդային իշխանությունը կարող է հաստատ մնալ։

Ահա թե ինչու այդքան թանգ եր մեզ բոլորիս համար ընկեր Լենինի հիշատակը։

Նա մեռավ, բայց գործը կենդանի յե։

Լենինի կենսագրությունը.

I

Վլադիմիր Իլյիչ Ուլյանով-Լենինը ծնվել է 1870 թվին Ռուսաստանում—Սիմբիրսկ քաղաքում։ Նրա հայրը ուսուցիչ էր և հետո ժողովրդական դպրոցների տեսուչ ու վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը։

Լենինը իր միջնակարգ ուսումը ավարտեց 17 տարեկան հասակում։ Այդ ժամանակ էր, վոր նրա մեծ յեղբորը՝ Ալեքսանդրին մահվան պատժի յենթարկեցին Ալեքսանդր III-ի դեմ մահափորձ կատարելու համար։ Այս ընտանեկան վիշտը խիստ ազդեց յերիտասարդ Լենինի վրա, և նրա մեջ առաջ յեկավ այն միտքը, վոր պետք է ազատել ժողովրդին թե թագավորից և թե ամբողջ ճնշող դասակարգից։ Լենինը թեև մտավ համալսարան, բայց այնտեղից շուտով արտաքսվեց ուսանողական շարժման մեջ մասնակցելու պատճառով և միայն 4 տարուց հետո նրան հաջողվեց համալսարանում քննություն տալ։

II

1893 թվին Լենինը գնաց Պետերբուրգ (այժմ կոչվում է Լենինգրադ) և այնտեղ սկսեց աշխատել բանվորական գործի համար։ Նա կազմակերպեց բանվորների գաղտնի միություններ և նրանց սովորեցնում էր Մարքսի ուսմունքը։ Բայց շուտով Լենինին իր ընկերների հետ ձերբակալեցին և մի տարուց ավելի բանտում պահելուց հետո՝ աքսորեցին Սիբիր 1897 թվին։ Յերեք տարի Սիբիրում մնալուց հետո Լենինը գնաց արտասահման։ Այստեղ նա սկսեց կազմակերպել բայշևիկների կուսակցությունը։ 1905 թվին սկսվեց ռուսական առաջին հեղափոխությունը, բայց զինվորների և գյուղացիների անգիտակից լինելու պատճառով չաջողվեց։

Լենինը անընդհատ շարունակում էր ղեկավարել բանվորական շարժումները։ 1917 թվին կատարվեց փետրվարյան հեղափոխությունը. թագավորը տապալվեց, բայց իշխանությունը մնաց կեղեքիչ դասակարգի, բուրժուների և կապիտալիստների ձեռքը։

III

Լենինը այդ ժամանակ վերադարձավ արտասահմանից, անցավ բանվորական շարժման գլուխը և կազմակերպեց

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը։ Իշխանությունը անցավ Խորհուրդների ձեռքը։ Բանվորները, գյուղացիներն ու Կարմիր բանակը միացյալ ուժերով ձեռք բերին իրենց ազատությունը Լենինի առաջնորդությամբ։ Բայց յերկարատև աշխատանքը և կրած տանջանքները կարճեցին մեծ մարդու կյանքը։ 1924 թվի հունվարի 21-ին չկար այլևս Լենինը։ Մեռավ Լենինը, բայց նրա ստեղծած գործը կա և կը մնա. այդ գործը շարունակում է Լենինի կազմակերպած Կոմմունիստական կուսակցությունը։

Աշխատանքի յերգը.

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

Մի յերգ գիտեմ յես աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրոխտ
մի յերգ գիտեմ յես աննման։

Հմայք ունի յերգս այնպես,
հոգսի ժամին թե վոր յերգես՝
թախիծ ու վիշտ կը չքանա—
լքված հոգուն նեցուկ է նա։

Հե՛յ, իմ յերգը միշտ աննման—
հզոր մուրճի թափի նման,
վորոտի պես հատու, խրոխտ—
մի յերգ գիտեմ յես աննման։

Ստեփան Շահումյան.

Ստեփան Շահումյանը Բագու վոտ դնելով, սիրելի դարձավ բոլոր բանվորներին։ Նրա դռները միշտ բաց եյին կուսակցական և անկուսակցական բանվորների առաջ։ Նա

սիրված եր վոչ միայն իր համախոհ ընկերներից, այլ և իր հակառակորդներից։ Մի դեպք նրա կյանքից.—

Յերբ մի խմբակ՝ ճանաչելով Շահումյանին՝ վորոշել եր սպանել նրան, խմբակի անդամներից մեկը ծանոթանում է Ստեփան Շահումյանի հետ ու գնում նրա հայերեն դասախոսությանն։

Դասախոսությունը լսելուց հետո նույն այդ մարդը յերդվեց իր կյանքը չխնայել Ստեփանի համար և մտավ Կոմմունիստական կուսակցության մեջ։

1918 թվին Շահումյանը Կովկասի արտակարգ կոմիսարի պաշտոնով ապրում եր 2 փոքրիկ սենյակներում։ Յերբ նրան հարց տվին. «Ինչպես ես ապրում քաղաքի ծայրում, ուր ամեն մի րոպե կարող են վնասել քեզ»։ նա հանգիստ պատասխանեց.—«Այդ բանով յես չեմ հետաքրքրվում»։

Շահումյանը Կովկասի բանվորության ղեկավարն եր և այսպես ել հեղափոխությունը անվանեց նրան։

Թանգագին ընկեր,

Այժմ սովորեցիր գրել-կարդալ։ Մեծ բարիք է դա քեզ համար, չկորցնես։ Սովորիր միշտ գիրք ու լրագիր ունենալ մոտդ։ Դրանցից անբաժան լինելով՝ գիտեցածդ ավելի հաստատուն կը դարձնես և մշտապես գրագետ կը մնաս։

Գրագիտությունը քեզ զվարճության համար չի պետք։ Մեր առաջնորդ և ուսուցիչ Լենինն ասում եր. «Բանվորն ու գյուղացին կարդալ-գրելով պետք է լավացնեն իրենց տնտեսությունն ու իրենց պետությունը»։

Գիրքն ու լրագիրը կը տան բոլոր քեզ տանջող հարցերի պատասխանը։ Գրքից ու լրագրից կիմանաս դու, թե ինչպես դնես քո տնտեսությունը, վոր վոչ կարոտություն քաշես, վոչ աղքատություն։

19 15/VIII 24 թ.

Սիրելի ընկեր,

Քանի անգրագետ եյիր, զուրկ եյիր դու գիտակցական կյանքից։ Հիմա դու վոտք ես դնում նրա շեմքը։ Դա մի մեծ տուն է բանվորի ու գյուղացու համար։—Դու յել մեզ հետ մեկտեղ կռվիր անգրագիտության դեմ։ Մենք մի ընկերություն ունենք՝ «Կորչի անգրագիտությունը»։ Գյուղում լինես, թե գործարանում՝ մի բջիջ կազմակերպիր նրա համար։ Հետևիր, վոր բոլոր անգրագետ ընկերներդ քեզ պես գրագետ դառնան։

Խնամք տար լիկկայանին, ուսուցիչ ու այբբենարան ճարիր նրա համար։ Դու յել յեռանդուն գործով մասնակցիր Լենինի կտակի իրագործման. «Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին վոչ մեկը անգրագետ չպետք է մնա Ռուսաստանում»։

Չմոռանաս, ընկեր, վոր այս կտակը վերաբերում է մեզ։ «1930 թվին և մեր հեղափոխության տասնամյակին վոչ մեկը անգրագետ չպետք է մնա Հայաստանում»։

19 20/VIII 24 թ.

Ընկ. Տրոցկու նամակը կարմիր զինվորին։

Մայիսի 1-ի առթիվ գրում եմ քեզ, և դու կարդում ես իմ նամակը։ Գրագիտությունը կապում է մեզ իրար հետ։ Այդ է նրա մեծ ուժը։

Այն բոլորն, ինչ մարդկային հազարավոր սերունդներ մինչև այժմ կատարել, սովորել, տեսել և զգացել են, գրված են գրքերում։ Ցեվ վորովհետև դու գրագետ ես, այդ բոլորը քեզ մատչելի յե։

Քեզ կարդալ-գրել սովորեցրեց Կարմիր բանակը։ Ցեղբայրաբար շնորհավորում եմ քո այդ մեծ հաջողությունը։ Այժմ դու ձեռքումդ ունես գիտության դռները բացող բանալին։ Բայց տես՝ կես ճանապարհին կանգ չառնես։ Ով կի-

սագրագետ ե, նա շուտ ե մոռանում և անգրագետ դառնում։ Պետք ե սովորել առանց դժվարության, սահուն և ազատ կարդալ։ Յուրաքանչյուր ազատ բոպեյին պիտի կարդալ, գրել և վերջնականապես գրագետ դառնալ։

Ինչքան գեղեցիկ վոտանավորներ, յերգեր, պատմվածքներ, պատմական և գիտական գրքեր կան գրված.—մարդկային մտքի մի ամբողջ ովկիանոս։ Յեվ դեռ ինչքան նոր գրքեր պիտի գրվեն։ Չէ՞ վոր մարդկությունը յերբեք կանգ չի առնում, այլ միշտ առաջ ե գնում։

Հենց վոր մեր յերկրի վերքերը բուժենք, բարձրացնենք մեր տնտեսությունը, լավացնենք և գեղեցկացնենք մեր կյանքը, մեր ամբողջ ազգաբնակությունը կազատվի տգիտության խավարից և կը շարժվի դեպի առաջ։

Նայիր, ընկեր, յետ չմնաս։ Սովորիր, ժամանակ մի վատնիր։ Հավասարվիր առաջավորին։

Լ. Տրոցկի

Կարմիր բանակի կազմն ու խնդիրները.

1. Կարմիր բանակը բաղկացած ե բանվորներից և այն աշխատավոր գյուղացիներից, վորոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը։

2. Զինվորական հասակ ունեցող անհարապատ տարրերը կանչվում են բանակ վորպես սպասարկու, ոժանդակ աշխատանքներ տանելու համար, առանց զենք կրելու իրավունքի։

4. Կարմիր բանակը զինված մի ուժ ե, վորի առաջին խնդիրն ե Ս. Խ. Հ. Մ. (Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության) անկախության և ազատության ապահովումը ամեն տեսակի հարձակումներից։

5. Կարմիր բանակի մյուս նպատակն ե պաշտպանել բանվորների և գյուղացիների խաղաղ կյանքը և շինարար աշխատանքը շահագործողների բռնություններից։

6. Համերաշխությունը և փոխադարձ ոգնությունը Կարմիր բանակի շարքերում ամենաբարձր աստիճանի պիտի հասնի։ Յուրաքանչյուր կարմիր բանակային պիտի

հիշե, վոր հաջողությունն ու հաղթանակը ձեռք են բերվում կարմիր զինվորների փոխադարձ ոգնությամբ։

Մեկը բոլորի համար, բոլորը մեկի համար։

7. Պատմության մեջ վոչ մի բանակ չի ունեցել այնպիսի բարձր նպատակ, վորպիսին ունի մեր Կարմիր բանակը։ Այդ նպատակն ե—ազատագրել աշխատավոր գյուղացուն և բանվորին շահագործողներից։

Կարմիր յերդում.

Հանդիսավոր խոսում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը մտնելիս.

1. Յես, աշխատավոր ժողովրդի զավակ, Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության քաղաքացիս, ընդունում եմ բանվորական և գյուղացիական բանակի զինվորի կոչումը։

2. Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջ յես պարտավորվում եմ պատվով կրել կարմիր զինվորի կոչումը, ուսումնասիրել ռազմական գործը և աչքիս լուսի պես պահպանել ժողովրդական և ռազմական գույքը փչանալուց և հափշտակումից։

3. Յես պարտավորվում եմ խստիվ և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և առանց առարկության կատարել բանվորական և գյուղացիական կառավարության իշխանությամբ նշանակված հրամանատարների բոլոր հրամանները։

4. Յես պարտավորվում եմ հեռու մնալ և հեռու պահել ընկերներիս այն բորոր արարքներից, վորոնք վարկաբեկում են Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության քաղաքացու արժանապատվությունը և իմ բոլոր գործողություններն ու մտքերն ուղղել բոլոր աշխատավորների ազատագրման մեծ նպատակին։

5. Յես պարտավորվում եմ բանվորական և գյուղացիական կառավարության առաջին իսկ կոչին դուրս գալ պաշտպանելու Սոցիալիստական Խորհրդային Հանրապե-

տութիւնների Միութիւնն ամեն տեսակի վտանգներից և նրա բոլոր թշնամիների վտանգաւորութիւններից, ինչպես և Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան ժողովուրդների յեղբայրութեան և Սոցիալիզմի գործի համար մղած պայքարում չխնայել իմ ուժերը և նուիրիսկ կյանքս։

6. Յեվ յեթե յես չար մտադրութեամբ հրաժարվելու լինեմ իմ այս հանդիսաւոր խոստումից, թող ինձ վիճակվի ընդհանուրի արհամարհանքը և թող պատժի ինձ հեղափոխական որենքի անողոք ձեռքը։

Ինտերնացիոնալ.

Յելիր, ում կյանքը անիծել ե,
ով ճորտ ե, մերկ ե և սարուկ,
արդեն վառվում են մեր սրտերը,
արդեն կռվի յենք մենք ձգտում։

Սա յե մեր վերջին կռիվը
և պայքարը մեր հին,
Ինտերնացիոնալը
աշխարհը կը փրկի։

Այս հին աշխարհը կը քանդենք մենք
մինչև հիմքերը և հետո
մեր նոր աշխարհը կը շինենք
մենք, ուր վոչ սարուկ կա, վոչ դժգոհ։

Սա յե մեր վերջին կռիվը...(կրկնել)

Վոչ վոք չի տա մեզ ազատութիւն—
վոչ խենթ հերոսը, վոչ արքան.
մենք պետք ե մեր ազատութիւնը
խլենք մեր ձեռքով սեփական։

Սա յե մեր վերջին կռիվը...(կրկնել)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
Инвент. Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻ ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0246195

8161

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.